ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՂ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՄՆ «ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՈՒՄ

ԱՎԱՐՏԱԿԱՆ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ «ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ՝ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ»

ԱՆՑԿԱՑՄԱՆ ՎԱՅՐ՝ ՄԱՐՏՈՒՆՈՒ Տ. ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՀԱՍՄԻԿ ԲԵՅԲՈՒԹՅԱՆ

ՈՒՍՈՒՑԻՉ՝ ՆԱՐԻՆԵ ԱՍԱՏՐՅԱՆ

ԴՊՐՈՑ՝ «ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԳԵՂՀՈՎԻՏ ԳՅՈՒՂԻ N 2 ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

Մարտունի 2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....

ԳԼՈՒԽ 1. ՈՒՍՈՒՑՉԻ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳՈՐԾԸՆԿԵՐՆԵՐԻ ՀԵՏ՝ ՓՈՐՁԻ ՓՈԽԱՆԱԿՄԱՆ ԵՒ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ .....

ԳԼՈՒԽ 2. ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ԴԱՍ՝ ԹԻՄԱՅԻՆ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ՕՐԻՆԱԿՈՎ.....

ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ.....

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ .....

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Արդի աշխարհն արագ զարգացումների թատերաբեմ է, որտեղ յուրաքանչյուր պետություն փորձում է գոյատևել և դրա հետ մեկտեղ գրանցել զարգացման ցուցանիշներ: Կրթությունը, լինելով պատմական հասկացություն, ցայսօր արդիական ու հասարակության համար անհրաժեշտ ոլորտ է: Կրթության միջոցով սերնդեսերունդ իրականացվում է գիտելիքների, հմտությունների ու փորձի փոխանցում՝ պայմաններ ստեղծելով աճի ու զարգացման ապահովման համար: Միևնույն ժամանակ հասարակական, քաղաքական, տնտեսական, սոցիալ-հոգեբանական, ժողովրդավարական և այլ գործընթացների արդյունքում կրթությունը, դրա որակն ու նշանակությունը փոփոխվում են տեղից տեղ: «Կրթությունն ամենահզոր զենքն է, որը դու կարող ես օգտագործել աշխարհը փոխելու համար»: Հենց այսպես էր բնութագրում ու արժևորում կրթությունը բոլոր ժամանակների ամենանշանավոր առաջնորդներից մեկը՝ Նելսոն Մանդելան: Կրթության մեջ շարունակ տեղի են ունենում բարեփոխումներ, և համալսարանները, քոլեջներն ու դպրոցները փորձում են դասապրոցեսին ինտեգրել նորարարական մեթոդներ՝սովորողների հետաքրքրության և ուսումնառության արդյունքների բարձրացման նպատակով: Թիմային դասավանդումը լայնորեն հայտնի է որպես մեթոդ, որը ենթադրում է միևնույն դասարանում տվյալ առարկայի կամ առարկաների ուսուցումը երկու կամ ավելի ուսուցիչների կողմից: «Այս մեթոդը ի սկզբանե նախատեսված էր ներառական կրթության համար, սակայն ժամանակի ընթացքում լայն կիրառություն ստացավ հանրակրթության մեջ, և ի հայտ կան դրա օգտագործման տարբեր մոտեցումներ»[1]:

ԲԱՆԱԼԻ ԲԱՌԵՐ: Ուսուցիչների համագործակցություն, արդյունավետ կրթություն, թիմային դասավանդում:

ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅԱՆ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Դպրոցում նույն կամ տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչների համագործակցությունը կարող է արդյունավետ ներգրավվածություն ունենալ դասավանդման պրոցեսում:

[1] Տե՛ս Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի, 2018, էջ 65:

Համագործակցության ընթացքում տարբեր ուսուցիչներ փորձի փոխանակման ժամանակ կարող են կատարելագործել մանկավարժական փորձը և նոր հմտություններ սովորել: Համագործակցության հանդեպ ամուր նվիրվածություն ցուցաբերելով՝ ուսուցիչներին ավելի հասանելի են դառնում ուսումնական ռեսուրսները, և նրանց դասավանդման մեթոդները կատարելագործվում են, քանի որ համագործակցությունն առաջարկում է աջակցություն՝ նոր գաղափարներ և գործողություններ փորձելու համար: Այս գործընթացը նաև հնարավորություն է տալիս դպրոցին շարունակաբար անդրադառնալ և կատարելագործել աշխատանքը և բարձր չափանիշներ ստեղծել բոլոր աշակերտների համար: «Դպրոցները պետք է հաղթահարեն տարբեր խոչընդոտներ, ինչպիսիք են՝ սահմանված համակարգերը, ժամանակի սղությունը, դպրոցական մշակույթի վերասահմանումը ՝ ուսուցիչների մեկուսացումից մինչև ուսուցիչների համագործակցություն, լարվածություն և տարաձայնություններ, որոնք կարող են ստեղծել թիմային աշխատանք»[2]:

Հետազոտական աշխատանքի թեմայով պայմանավորված՝ առաջ են գալիս հետևյալ ***նպատակները****.*

1. Խթանել նույն կամ տարբեր առարկան դասավանդող ուսուցիչների համագործակցությունը:
2. Միջառարկայական կապեր ստեղծելով՝ աշակերտի մոտ ձևավորել կայուն գիտելիքներ:
3. Միապաղաղությունից խուսափելով՝ դասն անցկացնել հետաքրքիր և բազմաբովանդակ կերպով:

Հետազոտական աշխատանքի թեմայով պայմանավորված՝ առաջ են գալիս հետևյալ ***խնդիրները****.*

1. Ուսումնասիրել ուսուցիչների համագործակցության և փորձի փոխանակման առանձնահատկությունները:
2. Տարբեր ուսուցիչների հետ թիմային դասավանդման եզրեր գտնել:
3. Փորձարկել և կիրառել թիմային դասը ուսուցման գործընթացում:
4. Բացահայտել թիմային դասերի էությունը:

[2] https://www.etwinning.net/hy/pub/etwinning-plus/about.htm

5. Գնահատել, թե թիմային դասը կարող է արդյոք երեխայի ճանաչողական մտածողության և հետաքրքրությունների առարկան լինել:
6. Կիրառել միջառարկայական կապեր:

ԳԼՈՒԽ 1.

Ուսուցչի համագործակցությունը գործընկերների հետ՝ փորձի փոխանակման և մասնագիտական գործունեության արդյունավետության բարձրացման նպատակով

Ուսուցիչների համագործակցության համար ամենաարդյունավետ դասապրոցեսը կարող է լինել դիմային դասավանդումը, որի ժամանակ ուսուցիչները կարող են փորձի փոխանակման շնորհիվ զարգացնել ու կատարելագործել մանկավարժական փորձը, որն էլ առաջ կտանի մասնագիտական գործունեության արդյունավետությունը: Թիմային դասավանդումը լայնորեն հայտնի է որպես մեթոդ, որը ենթադրում է միևնույն դասարանում տվյալ առարկայի կամ առարկաների ուսուցումը երկու կամ ավելի ուսուցիչների կողմից: Այս մեթոդը ի սկզբանե նախատեսված էր ներառական կրթության համար, սակայն ժամանակի ընթացքում լայն կիրառություն ստացավ հանրակրթության մեջ, և ի հայտ եկան դրա օգտագործման տարբեր մոտեցումներ:

Թիմային դասավանդման փուլերն ու տեսակները

Թիմով դասավանդող ուսուցիչները իրականացնում են համագործակցման և համակարգման աշխատանքներ և ջանք են գործադրում՝ փոփոխելու դասընթացի դինամիկան կամ բովանդակության ժամանակացույցը՝ դասարանում ուսումնառությանը համաձայնեցնելու նպատակով: Այս ամենը տեղի է ունենում երեք հիմնական փուլերով.

1) Դասի համատեղ պլանավորում

2) Դասի համատեղ իրականացում

3) Դասից հետո տեղի ունեցող քննարկում:

Ենթադրվում է, որ համագործակցության մեծ մասը տեղի է ունենում դասից առաջ՝ պլանավորման փուլում, և շատ կարեւոր է նաև, թե ինչ է տեղի ունենում դասից հետո՝ գրավոր աշխատանքների և քննությունների գնահատման, դասի

գնահատման և կրկին պլանավորելու փուլում: Ըստ Դիկինսոնի՝ համատեղ պլանավորումը նշանակում է առնվազն որոշ ժամանակ ծախսել միասին կազմակերպված պլանավորման «ժողովների» ժամանակ, որոնց ընթացքում տեղի է ունենում փոխգործակցություն, եւ գործընկերների միջեւ զարգանում է ընդհանուր նպատակների զգացողություն[3]: Համատեղ դասավանդման փուլում յուրաքանչյուր հատված պետք է ուսուցանվի միևնույն համատեքստում, իսկ համատեղ գնահատման փուլում պետք է գնահատվի երկու ուսուցիչների կողմից ներկայացված բովանդակությունը: Թիմային դասավանդման կարևորագույն տարրերն են դասը վարելու ռազմավարությունները և թիմի անդամ ուսուցիչների պարտականություններն ու դերերը: Առանձնացվում է թիմային դասավանդման վեց հիմնական տեսակ, որոնք ընդգծում են ուսուցիչների պարտականությունները և դերերը: Ստորև ներկայացված են Փոլոքի և ուրիշների ներկայացրած մոդելներից յուրաքանչյուրի հակիրճ նկարագրությունը:

1. Զուգահեռ ուսուցում (Parallel teaching). թիմային դասավանդման այս մոդելի կիրառմամբ ուսուցիչները սովորեցնում են միևնույն նյութը միաժամանակ տարբեր խմբերին՝ այդպիսով կարողանալով ավելի լավ գնահատել (որքանով է աշակերտը յուրացրել գնահատվող նյութը):

Հանձնարարությունը նույնն է երկու խմբերի համար էլ:

2. Այլընտրանքային ուսուցում (Alternative teaching). այս մոդելի կիրառմամբ լրացուցիչ աջակցություն պահանջող աշակերտները հավաքվում են մի փոքրիկ խմբի մեջ, և յուրաքանչյուր խումբ միաժամանակ ստանում է նույն հանձնարարությունը:

3. «Խմբային» ուսուցում (Station teaching). դասարանը բաժանվում է մի քանի խմբերի, որոնցից յուրաքանչյուրն աշխատում է առանձին թեմայի շուրջ, իսկ ուսուցիչներից յուրաքանչյուրը աշխատում է խմբերից մեկի հետ: Ժամանակ առ ժամանակ խմբերի անդամները փոխվում են տեղերով՝ ստանալու հանձնարարություն մյուս ուսուցչից: Որոշ խմբեր աշխատում են ինքնուրույն:

4. Թիմով ուսուցում (Team teaching). երկու ուսուցիչ միասին աշխատում են ամբողջ դասարանի հետ: Նրանք կարող են նախապես որոշել իրենց դերերը կամ

[3] Ավելին տե՛ս Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի, նույն տեղում:

հանպատրաստից իրենց վրա վերցնել հիմնական ուսուցչի դերը, ապա անհրաժեշտության դեպքում հետ կանգել այդ դերից: Այս կերպ ուսուցիչները կարող են դասավանդել տարբեր ոճերով:

5. Օժանդակող ուսուցում (One teach – one assist/Assistive teaching). ուսուցիչներից մեկը կրում է ուսուցանողի հիմնական պարտականությունները և հրահանգներ է տալիս, իսկ մյուս ուսուցիչը շրջում է դասարանով և անհրաժեշտության դեպքում աշակարտներին օգնում, ստուգում առաջադրանքը, կամ նորից բացատրում՝ առանց գրավելու մյուսների ուշադրությունը:

6. Ուսուցանում–դասալսում (One teach - one observe). ուսուցիչներից մեկն ուսուցանում է, իսկ մյուսը ուշադիր հետևում է, թե ինչպես են աշակերտները կատարում առաջադրանքները: Նա գրառումներ է կատարում, որպեսզի դասից հետո երկու ուսուցիչները միասին քննարկեն դրանք՝ ուսուցման և գնահատման ճշգրտումեր կատարելու նպատակով:

Թիմային դասավանդման արդյունավետության նախապայմանները գոյություն ունեն մի շարք գործոններ, որոնք կարող են ազդեցություն թողնել թիմային դասավանդման արդյունավետության վրա, այդ իսկ պատճառով նախքան մեթոդի կիրառությանն անցնելը անհրաժեշտ է որոշ նկատառումներ կատարել: Եթե թիմով դասավանդումը կիրառվելու է, ապա դրա արդյունավետ իրականացման համար ուսուցիչներին պետք է ուղղություն տրվի: Նախ և առաջ նրանք պետք է ծանոթ լինեն մեթոդի տեսակներին, և նախքան մեթոդի կիրառությանն անցնելը վերապատրաստվեն, ծանոթանան դրա հիմքում ընկած սկզբունքներին, համագործակցային հմտություններ ձեռք բերեն և այլն: Պետք է նաև հաշվի առնել այն փաստը, որ դասարանում երկու ուսուցչի ներկայությունը հնարավոր է շփոթություն առաջացնի աշակերտների շրջանում: Դրանից խուսափելու համար աշակերտներին պետք է իրազեկել, թե ինչ նպատակով է կիրառվում տվյալ մեթոդը, և նրանք պետք է գիտակցեն, որ երկու ուսուցիչներն էլ այդտեղ են գտնվում իրենց օգնելու համար:

Մի շարք խնդիրներ, ինչպիսիք են դասից առաջ և հետո համագործակցությունը, պարտականությունների բաշխումը կամ գնահատումը, կարելի է հաղթահարել, եթե ուսուցիչներն իրենք են որոշում ներգրավվել թիմային դասավանդման մեջ, և իրենք են ընտրում գործընկերոջը: Այսպիսի պայմաններում թիմային ուսուցման միջոցով

ուսուցիչները կարող են ձեռք բերել հրաշալի հնարավորություն մասնագիտական զարգացման համար: Անգամ թիմային դասավանդման մեծ փորձ ունեցող ուսուցիչները նշում են, որ մեթոդը պետք է կիրառել միայն այն պարագայում, երբ կա փոխհամաձայնություն մասնակից երկու անձանց միջեւ: Ուսուցիչը, ով չի ցանկանում աշխատել գործընկերոջ հետ, կարող է ունենալ հիմնավոր պատճառներ. օրինակ՝ մեծ փորձ ունեցող ուսուցիչը միգուցե չի ցանկանում փոփոխել դասավանդման իր մոտեցումները կամ դրանք կիսել մեկ ուրիշի հետ, որն այլ մոտեցումներ ունի: Գործընկերոջն ընտելու հնարավորությունն ուսուցիչներին տալիս է մասնագիտորեն եւ հոգեբանորեն ապահով լինելու զգացողություն: Թիմային ուսուցման հաջող ընթացքի համար շատ կարևոր գործոն է համատեղելի ուսուցիչների ներգրավվումը թիմում: Սկրագսի եւ ուրիշների պնդմամբ՝ համատեղելիություն նշանակում է ոչ միայն կամավոր մասնակցություն, այլև մտածելակերպի նմանություն:

Փոխադարձ վստահությունը, հարգանքը, համաձայնությունն ուսուցանման, պլանավորման, վարքագծի կառավարման շուրջ և դասի կազմակերպումը չափազանց կարևոր են թիմային դասավանդման հաջողության համար: Սկրագսը թիմային դասավանդումը համեմատում է ամուսնության հետ, որը հիմնված է համապատասխանության և փոխադարձ հարգանքի վրա: Թիմում ուսուցիչների պարտականությունն է նոր ռազմավարություններ մշակելը, և փորձել այլընտրանքային լուծումներ տալ ի հայտ եկող խնդիրներին, ի հայտ բերել միմյանց ուժեղ կողմերը, հաստատել դրական աշխատանքային հարաբերություններ, որն էլ կհանգեցնի աշակերտների ուսումնառության արդյունքների բարելավմանը:

Եթե անգամ թիմում ուսուցիչները լավ հարաբերությունների մեջ են, այնուամենայնիվ, լինում են դեպքեր, երբ տարաձայնություններն անխուսափելի են, քանի որ միևնույն հարցի շուրջ միշտ էլ կարող են տարբեր կարծիքներ լինեն: Տարաձայնություններից խուսափելու համար անհրաժեշտ է, որ միասին դասավանդող ուսուցիչները հանդես գան ընդհանուր, միասնական մոտեցումներով և շարունակաբար քննարկեն դասավանդման մեթոդի հետ կապված վիճահարույց հարցերը: Գեթսը խորհուրդ է տալիս, որ ուսուցիչները փորձեն ընդունել միմյանց ուժեղ կողմերը, դասավանդման մոտեցումներն ու հետաքրքրությունները և իրենց առաջադրած տարբերակների շուրջ վարեն բանակցություններ և քննարկումներ՝

ուսուցման գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու և՛ իրենց, և՛ աշակերտների համար:

Թիմային դասավանդման հաջող ընթացքն ապահովելու համար անհրաժեշտ է յուրաքանչյուր դասի քայլ առ քայլ պլանավորում: Ուսուցիչները, ովքեր արդեն փորձառու են թիմային դասավանդման մեջ, պետք է ներկայացնեն այն սկսնակ ուսուցիչներին, որոնք, հնարավոր է, ինքնավստահ չլինեն: Այս ամենը կարող է նպաստել ավելի ճկուն մտածողության, ռազմավարության եւ գործնական հմտությունների զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի, 2018:
2. https://www.etwinning.net/hy/pub/etwinning-plus/about.htm

ԳԼՈՒԽ 2.
Փորձարարական դաս՝ թիմային դասավանդման օրինակով

Հետազոտության նախապատրաստում և իրականացում: Ճիշտ է ասված, որ պատմությունը ժողովրդի հավաքական հիշողությունն է, նրա կենսագրությունը: Հայ ժողովուրդն աշխարհի հնագույն ժողովուրդներից է: Նա պատմական ասպարեզ է իջել անհիշելի ժամանակներից և անցել զարգացմանբարդ ու դժվարին, բայց և փառավոր ու հերոսական ճանապարհ: «Գալով հազարամյակների խորքերից՝ հայ ժողովուրդը կերտել է խիզախումներով ու մաքառումներով, կորուստներով ու ձեռքբերումներով, մտքի թռիչքներով ու արարումներով լի հարուստ պատմություն ու մշակույթ»[4]: Շարունակելով իր պատմական ուղին՝ ժամանակների ու դարերի անբաժան ուղեկից հայ ժողովուրդը հասել է մինչև մեր օրերը և ոտք է դնում արդեն նոր հազարամյակ՝ վերստին նվաճած իր ազատությամբ, իր նորանկախ պետականությամբ և այն պաշտպանելուու զորեղացնելու անսասան վճռականությամբ: Այսպես, ժամանակների հոլովույթի մեջ է գոյացել մեր ժողովրդի պատմությունը, որը պետք է իմանա յուրաքանչյուր հայ մարդ, ՀՀ յուրաքանչյուր քաղաքացի՝ անկախ տարիքից, զբաղմունքից նապրելու վայրից: Որտեղ էլ որ գտնվենք՝ Հայաստանում թե սփյուռքում, օտարության մեջ թե հայրենիքում, հայոց պատմությունն իմանալը պետք է բոլորիս, որովհետև այն ունի ճանաչողական և գործնական հսկայական նշանակություն: Նրանում է անթեղված մեր ժողովրդի դարավոր կենսափորձը, գոյության կերպն ու խորհուրդը: Առանց հայոց պատմության իմացության՝ անհնար է ազգի լիիրավ անդամ կոչվել, որովհետև պատմությունը ոչ միայն ժողովրդի անցած ուղին, այլև նրա միսն ու արյունը, հողն ու ջուրը, նրա կերտած-ստեղծածը, նրա ոգին ու հոգեբանությունը, բնավորությունն ու խառնվածքն է: Հայոց պատմությունը մեծ հնարավորություն ունի ձևավորելու ազգային գիտակցություն ու մտածողություն, նրա միջոցով ավելի շատ կարելի է հաղորդակցվել հայ ժողովրդի կյանքին,գիտությանը, հասարակական մտքին ու մշակույթին: Ինչպես հայտնի է, պատմական շատ դեպքեր ու դեմքեր իրենց գեղարվեստական արտացոլումն են ստացել գեղարվեստական գրականության մեջ:

Ներքոնշյալ փորձարարական դասի միջոցով մենք փորձեցինք համադրել պատմական դեպքը և դրա գեղարվեստական արտացոլումը: Այս դեպքում՝ Հայոց պատմություն, Հայ գրականություն և Հայոց եկեղեցու պատմություն առարկաների

[4] https://fliphtml5.com/fumf/yayr/basic

ուսուցիչների համագործակցության, փորձի փոխանակման միջոցով կայացավ համագործակցային դաս:

Հետազոտության ընթացքը: Հետազոտությունն իրականացվել է դպրոցում՝ 7-րդ դասարանում: Հետազոտական աշխատանքին ներգրավված են եղել յոթերորդ դասարանի քսաներեք աշակերտ, որոնցից ութը գերազանց են, տասը՝ հարվածային, հինգը՝ միջակ: Մեր նպատակն է տարբերի առարկաների ուսուցիրների համագործակցությամբ, փորձի փոխանակմամբ և միջառարկայական կապի միջոցով աշակերտի մոտ զարգացնել պատմական և գեղարվեստական փաստի ճիշտ ընկալումը, նյութի բազմակողմանի կերպով յուրացումը, ինչպես նաև դասապրոցեսի ընթացքում բարձրացնել աշակերտների ներգրավվածությունը և նյութի նկատմամբ հետաքրքրությունը:

Փորձարարական դաս. Հայոց պատմություն առարկայից հանձնարարված էր դաս՝ «Վարդանանց պատերազմը»[5]: Աշակերտներին նյութը տալուց առաջ հանձնարարվել էր տեղեկություններ հավաքել Քրիստոնեության մասին և վերհիշել հայ գրականության դասից Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը: Դասն անցկացվեց զրույցի միջոցով և կարող ենք ասել, որ դասին ներգրավվեցին դասարանի բոլոր աշակերտները: Դասին ներկա էին Հայոց եկեղեցու պատմություն և Հայ գրականություն առարկաների ուսուցիչները:

Աշակերտները հարց-պատասխանի միջոցով վերհիշեցին Քրիստոնեության ընդունումը և տարածումը Հայաստանում թեման, Քրիստոնության տարբերությունը մյուս կրոններից և մասնավորապես՝ զրադաշտականությունից: Հիմնվելով պատմական փաստերի վրա՝ աշակերտները կարողացան ինքնուրույն վերլուծությամբ հասկանալ Վարդանանց պատերազմի բուն էությունը՝ ազգի պահպանման և շարունակման տեսակետից: Դասի երկրորդ փուլում աշակերտները վերհիշեցին Դ. Դեմիրճյանի «Վարդանանք» պատմավեպը, թե երբ և ինչու է Դ. Դեմիրճյանն անդրադարձել պատմական նյութին, նրանք փորձեցին գտնել պատմական փաստի ու գեղարվեստական նյութի նմանություններն ու տարբերությունները: Աշակերտներից ոմանք փաստեցին, որ Վարդանի և Վասակի

[5] https://online.fliphtml5.com/fumf/tuwo/#p=30

գեղարվեստական կերպարները համապատասխանում են պատմական նյութին: Աշակերտներից ոմանք վերհիշեցին սյուժետային այնպիսի կերպարների, որոնց, օրինակ, պատմական նյութում չէին հանդիպել. մասնավորապես ռոմանտիկական սյուժետային կերպարներն:

Իսկ վերջում, հայ ժողովրդի կյանքում Քրիստոնեության կարևորությունը գնահատելով՝ աշակերտները վերստին փաստեցին, որ Վարդանանց պատերազմում հայ ժողովուրդը ոչ միայն տարավ բարոյական հաղթանակ, այլև կարողացավ պահպանել տարածքային ամբողջականությունը, կրոնական անկախությունը և շարունակեց իր գոյությունն առ այսօր:



ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Դպրոցում նույն կամ տարբեր առարկաներ դասավանդող ուսուցիչների համագործակցությունը կարող է արդյունավետ ներգրավվածություն ունենալ դասավանդման պրոցեսում:
2. Սովորողների հետաքրքրության և ուսումնառության արդյունքների բարձրացման նպատակով թիմային դասավանդումը դառնում է մեթոդ, որը ենթադրում է միևնույն դասարանում տվյալ առարկայի կամ առարկաների ուսուցումը երկու կամ ավելի ուսուցիչների կողմից:
3. Թիմով դասավանդող ուսուցիչները իրականացնում են համագործակցման և համակարգման աշխատանքներ և ջանք են գործադրում՝ փոփոխելու դասընթացի դինամիկան կամ բովանդակության ժամանակացույցը՝ դասարանում ուսումնառությանը համաձայնեցնելու նպատակով:
4. Առանձնացվում է թիմային դասավանդման վեց հիմնական տեսակ, որոնք ընդգծում են ուսուցիչների պարտականությունները և դերերը:
5. Փոխադարձ վստահությունը, հարգանքը, համաձայնությունն ուսուցանման, պլանավորման, վարքագծի կառավարման շուրջ և դասի կազմակերպումը չափազանց կարևոր են թիմային դասավանդման հաջողության համար:
6. Թիմում ուսուցիչների պարտականությունն է նոր ռազմավարություններ մշակելը, և փորձել այլընտրանքային լուծումներ տալ ի հայտ եկող խնդիրներին, ի հայտ բերել միմյանց ուժեղ կողմերը, հաստատել դրական աշխատանքային հարաբերություններ, որն էլ կհանգեցնի աշակերտների ուսումնառության արդյունքների բարելավմանը:
7. Ուսուցիչները պետք է փորձեն ընդունել միմյանց ուժեղ կողմերը, դասավանդման մոտեցումներն ու հետաքրքրությունները և իրենց առաջադրած տարբերակների շուրջ վարեն բանակցությունները քննարկումներ՝ ուսուցման գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու և՛ իրենց, և՛ աշակերտների համար:

8. Յուրաքանչյուր ուսուցիչ ունի իրավունք՝ ընտրելու գործընկեր: Գործընկերոջն ընտրելու հնարավորությունն ուսուցիչներին տալիս է մասնագիտորեն և հոգեբանորեն ապահով լինելու զգացողություն:
9. Ուսուցիչների համագործակցության, փորձի փոխանակման արդյունքում տեղի ունեցավ փորձարարական դաս:
10. Դասին մասնակցեցին երեք ուսուցիչ, որն ունեցավ իր թե՛լավ, թե՛ վատ կողմերը:
11. Դրական կողմերից կարող ենք նշել հետևյալները՝ նյութի բազմակողմանի ուսուցում, գիտելիքի խորը իմացություն, հետաքրքրություն նյութի նկատմամբ, հարց-պատասխանի կիրառում, աշակերտների ներգրավվածություն:
12. Որպես վատ կողմ կարող ենք նշել ժամանակի սղությունը:
13. Ըստ էության՝ դասը կարող ենք համարել հաջողված և կիրառելի՝ հետագա դասապրոցեսի նկատմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

3. Բանբեր Երևանի Վ. Բրյուսովի անվան լեզվահասարակագիտական համալսարանի, 2018:
4. https://www.etwinning.net/hy/pub/etwinning-plus/about.htm
5. https://fliphtml5.com/fumf/yayr/basic
6. https://online.fliphtml5.com/fumf/tuwo/#p=30